ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/116

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.07.2019թ. թիվ 26/26-1/11337-2019 գրությամբ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 03.07.2019թ. թիվ 01.3/11/16333-19 գրության հիման վրա, 08.07.2019թ. թիվ 26/26-1/11337-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար պլաստիկ քարտերի և օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի իրական շահառուները (հիմնադիրները) հանդիսանում են ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձինք, Ընկերության կողմից Հավելված 2.1-ում որպես իրական շահառուներ նշվել են հիմնադիր իրավաբանական անձանց անվանումները՝ «ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG» և «ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ» ՍՊԸ-ն (նշվել է նաև վերջինիս պետական ռեգիստրի վկայականի համարը):

ՀՀ ոստիկանությունը դեռևս 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրությամբ, այսինքն մինչև «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթով հայտերի բացումը՝ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, եթե գնման գործընթացի մասնակից կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձ և ոչ բաժնետիրական ընկերություն, արդյոք մասնակիցը պարտավոր է ներկայացնել որպես իրական շահառու այդ իրավաբանական անձանց շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները, թե ներկայացրած իրավաբանական անձի տվյալները որպես իրական շահառու բավարարում են ընթացակարգը շարունակելու համար:

Ի պատասխան ՀՀ ոստիկանության 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ գրությամբ ներկայացված խնդիրը կարգավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի՝ մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Իսկ նույն արձանագրության 5 կետի՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1 տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

Իսկ նույն արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ ներկայացնելու հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նաատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ինֆորմատիկ սոլուշնս» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում /հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային պարտավորություններ ունենալու հիմքով/ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով նույնպես՝ առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2 կետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրավերի 1 մասի 2 բաժնի 2.5 կետի ա ենթակետով պահանջվող պայմանագիր /մասնակցի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր. ինչպես նաև 20.06.2019թ. «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից policetv.gnumner@mail.ru էլ. փոստին է ուղարկվել Հավելված 6 և Հավելված 6.1 հեռախոսի էկրանի հանույթի տարբերակով, որը չի կարող համարվել օրինական, քանի որ ուղարկված է նկարի միջոցով և հնարավոր չէ ստուգել էլեկտրոնային ստորագրության իսկությունը:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1 /մասնակցի իրական շահառուների մասին տվյալները/, որը ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ

526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ, այն է՝ Հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Եվ նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել 27.06.2019թ. նիստը մինչև 28.06.2019թ. աշխատանքային օրվա ավարտը՝ անհամապատասխանությունները շտկելու համար:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է Հավելված 2.1 երկու տարբերակ՝ առաջին տարբերում նշված է մասնակից ընկերության՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները, իսկ երկրորդ տարբերակում՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հիմնադիր՝ իրական շահառու իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարների տվյալները, միևնույն ժամանակ ներկայացվել են նաև նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ 27.06.2019թ. «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին տրվել էր 1 աշխատանքային օր անհամապատասխանության շտկման համար:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից 28.06.2019-ին ուղարկվել է 2 հատ հավելված 2.1՝ իրական շահառուների տվյալների մասին, սակայն «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի տրամադրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը /բացակայում են իրական շահառուները/:

Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությունը և ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 17.06.2019 թ. ստացած թիվ ՖՆ/59497-19 գրությունը, և «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.20 կետի 2-րդ ենթակետը, որոշեց մերժել Բիլլ Սթոուն ՍՊԸ-ի հայտը:

Բացի դա «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացրած «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-2018-ՃՈ/ՀԱՄ-5» ծածկագրով պայմանագիրը չի համապատասխանում ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019 ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի պահանջներին, քանի որ մասնակիցը գրասենյակային և համակարգչային մեքենաների, սարքավորումների և նյութերի նմանատիպ պայմանագրի փոխարեն ներկայացրել է աշխատանքների կատարման պայմանագիր:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացրած «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2017-ԱՎՎ/ՃՈ/ՊՊԳՎ/ՀՈ-37/7» /11 850 000 տասնմեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԳՐԵՆԱԿԱՆ/2019/4» /1 860 000 մեկ միլիոն ութ հարյուր վաթսուն հազար/ ծածկագրով պայմանագրերի գումարները չեն բավարարում «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պահանջներին:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացրած «ՀՀ ԿԱ Ո-ՄԵԱՊՁԲ-ՊԱՔ-2014-19/ՃՈ» պայմանագիրը կնքված է 2014 թվականին ՀՀ Ոստիկանության և «Ատլաս Ինտերնեյշնլ» ԱԳ-ի միջև: «ՀՀ ԿԱ Ո-ՄԵԱՊՁԲ-ՊԼՔ–2014-19/ՃՈ» պայմանագիրը չի համապատասխանում «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պահանջներին, քանի որ Բիլլ Սթոուն ՍՊԸ-ի կողմից ուղարկվել է այլ կազմակերպության պայմանագիրը, առանց կոնսորցիումի:

Ընկերությունը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասը, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությունը, Կարգի 41-րդ կետը:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի իրական շահառուները (հիմնադիրները) հանդիսանում են ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձինք, Ընկերության կողմից հայտը ներկայացնելու փուլում Հավելված 2.1-ում որպես իրական շահառուներ նշվել են հիմնադիր իրավաբանական անձանց անվանումները՝ «ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG» և «ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ» ՍՊԸ-ն (նշվել է նաև վերջինիս պետական ռեգիստրի վկայականի համարը):

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն արձանագրել է հետևյալը՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1 /մասնակցի իրական շահառուների մասին տվյալները/, որը ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ, այն է՝ Հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում սատցված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել 21.06.2019թ. նիստը և առաջարկել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա շտկել անհամապատասխանությունները:

Նույնաբովանդակ շտկման ծանուցում է ուղարկվել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին: Նշված ծանուցումից չընկալելով, թե Հավելված 2.1-ում ինչ շտկում պետք է կատարվի և կոնկրետ ինչ տեղեկատվություն պետք է ներկայացվի, Ընկերությունը սահմանված ժամկետում՝ 24.06.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է Հավելված 2.1 երկու

տարբերակ՝ առաջին տարբերում նշելով մասնակից ընկերության՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները, իսկ երկրորդ տարբերակում՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հիմնադիր՝ իրական շահառու իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարների տվյալները:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն որոշվեց՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը /բացակայում են իրական շահառուները/: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջները, որոշեց մերժել Ընկերության հայտը:

Վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, մասնավորապես.

1. Նախ և առաջ, գնահատող հանձնաժողովի կողմից չեն նկարագրվել Հավելված 2.1-ում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները, այլ ընդամենը վերացակական նշվել է, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1 /մասնակցի իրական շահառուների մասին տվյալները/ ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ: Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը /մինչև 24.06.2019թ. ավարտը/ և առաջարկել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա շտկել անհամապատասխանությունները:

Մինչդեռ ակնհայտ է, որ նշվածը լոկ վերացական բնույթ է կրում, որից ընդհանրապես հասկանալի չէ, թե կոնկրետ ինչ անհապատասխանություններ են արձանագրվել և Ընկերությունը հստակ ինչ տեղեկատվություն պետք է նշի: Փաստորեն, գնահատող հանձնաժողովը այդպես էլ չի պարզաբանել, թե Ընկերության կողմից ներկայացված Հավելված 2.1-ով ներկայացված տեղեկատվությունը և Ընթացակարգի հրավերով և

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ սահմանված պահանջները ինչով չեն համապատասխանել միմյանց՝ այդ «գուշակությունը» թողնելով «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին:

Ակնհայտ է, որ այս հարցը հստակ չէ նաև ՀՀ ոստկանության համար: Մասնավորապես, նշված հարցում հստակեցում մտցնելու համար ՀՀ ոստիկանությունը 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, եթե գնման գործընթացի մասնակից կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձ և ոչ բաժնետիրական ընկերություն, արդյոք մասնակիցը պարտավոր է ներկայացնել որպես իրական շահառու այդ իրավաբանական անձանց շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները, թե ներկայացրած իրավաբանական անձի տվյալները որպես իրական շահառու բավարարում են ընթացակարգը շարունակելու համար: Սակայն ի պատասխան ՀՀ ոստիկանության 11.06.2019թ. թիվ 01.3/14373-19 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը ընդամենը հայտնել է, որ գրությամբ ներկայացված խնդիրը կարգավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ:

Փաստացիորեն նշված գրագրությունը վկայում է, որ հենց ինքը ՀՀ ոստիկանությունը չի պատկերացնում, թե Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ համաձայն՝ երբ գնման գործընթացի մասնակից կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձ է, արդյոք մասնակիցը պարտավոր է ներկայացնել որպես իրական շահառու այդ իրավաբանական անձանց շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները, թե ներկայացրած իրավաբանական անձի տվյալները որպես իրական շահառու բավարարում են ընթացակարգը շարունակելու համար: Եվ ինչպես երևում է ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրությունից՝ այս հարցի հստակ պատասխանը չի ստացվել, այլ ընդամենը հղում էր կատարվել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությանը:

Հենց նույն բովանդակությամբ և տրամաբանությամբ գնահատող հանձնաժողովի կողմից շտկման պահանջ է ներկայացվել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին՝ չպարզաբանելով, որ եթե

մասնակցի իրական շահառուն իրավաբանական անձ է, ապա պետք է ներկայացնել որպես իրական շահառու այդ իրավաբանական անձանց շահառու հանդիսացող ֆիզիկական անձանց տվյալները, թե ներկայացրած իրավաբանական անձի տվյալները:

Հենց այս պատճառով զբաղվելով գուշակությամբ՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկված երկու տարբերակի Հավելված 2.1՝ մեկում նշելով «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները, իսկ երկրորդ տարբերակում՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հիմնադիր՝ իրական շահառու իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարների տվյալները:

Վերոհիշյալի արդյունքում անկիայտորեն խախտվել է իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները), քանի որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ–ի համար նման բովանդակությամբ ծանուցում ստանալիս՝ անհասկանալի է եղել, թե կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել հրավերի պահանջների նկատմամբ և հստակ ինչ պետք է շտկեր և նշվեր մասնակցի կողմից:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունից ընդհանրապես չպետք է պահանջվեր շտկում կատարել Հավելված 2.1-ում, քանի որ ինչպես արդեն նշվել է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի իրական շահառուները (հիմնադիրները) հանդիսանում են ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձինք, Ընկերության կողմից Հավելված 2.1-ում որպես իրական շահառուներ նշվել են հիմնադիր իրավաբանական անձանց անվանումները՝ «ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG» և «ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ» ՍՊԸ-ն (նշվել է նաև վերջինիս պետական ռեգիստրի վկայականի համարը): Եվ Ընկերությունը չէր կարող նշել տեղեկատվություն ֆիզիկական անձ համարվող իրական շահառուների մասին, այն պարզ պատճառով, որ դրանք բացակայում են: ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 01.12.2017թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2017/74 որոշմամբ արձանագրվել է, որ եթե մասնակցի իրական շահառուն (հիմնադիրը) հանդիսանում են ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձ, ապա Հավելված 2.1-ում որպես իրական շահառուներ նշվում է միայն հիմնադիր իրավաբանական անձի անունը: Վերոհիշյալի օգտին է խոսում նաև ՀՀ

կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության այն հատվածը, որի համաձայն որի մասնակիցը հայտով ներկայացնում է …… այն անձի /անձանց/ տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին:

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն իրավացիորեն նշել է այն անձի /անձանց/՝ տվյալ դեպքում իրավաբանական անձանց, տվյալները, ովքեր իրավունք ունեն նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում են մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին:

Իսկ եթե տեսականորեն ընդունենք, որ այնուամենայնիվ, պահանջվում էր ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն, ապա երկրորդ փուլով, նախ, ներկայացվել են իրական շահառու հանդիսացող իրավաբանական անձանց գործադիր տնօրենների տվյալները, իսկ այնուհետև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջները համաձայն՝ քանի որ բացակայել են ֆիզիկական անձ շահառուներ, ուստի ներկայացվել են հայտ ներկայացնող «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն իրականում ոչ մի նպատակ չի ունեցել թաքցնելու որևէ տեղեկատվություն իր իրական շահառուների մասին, և եթե ՀՀ ոստկանության կողմից հստակ նշվեր, թե ինչ տեղեկատվություն է ակնկալում, որպեսզի Ընկերությունը ներկայացներ, ապա անխոս, նման տեղեկատվությունը կներկայացվեր գնահատող հանձնաժողովին:

Բացի այդ, «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն տարիներ ի վեր, այդ թվում նաև 2018-2019թթ., մասնակցել է ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված բազմաթիվ պետական գնման ընթացակարգերի և ներկայացրել իր իրական շահառուների մասին հենց այսպիսի տեղեկություններ, և մինչ օրս Ընկերությունից երբևիցե չի պահանջվել ներկայացնել տեղեկատվություն ֆիզիկական անձ՝ շահառուի մասին, քանզի վերջինս բացակայում է: Մինչդեռ անհասկանալիորեն հենց այս մրցույթի շրջանակներում ՀՀ ոստիկանության

կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտմամբ պահանջվել է ներկայացնել այնպիսի տեղեկատվություն, ինչը Ընկերության մոտ բացակայում է, իսկ նման տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությանը վերապահված է ներկայացնել միայն գործադիր մարմնի ղեկավարի տվյալները:

Տպավորություն է ստեղծվում, որ ՀՀ ԿԱ ոստիկանությունը նախօրոք իմանալով, թե «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն ինչպիսի տեղեկատվություն է ներկայացնում իրական շահառուների մասին, Ընկերության մասնակցությունից և Ընթացակարգի հայտերը բացելուց գրեթե երկու շաբաթ առաջ համապատասխան հարցում կատարելով ՀՀ ՖՆ, արդեն իսկ պատրաստվել է մերժելու «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը՝ մասնակցի իրական շահառուների հիմքով: Սակայն անգամ ՀՀ ֆինանսների նախարարության տրված պարզաբանումից է անհասկանալի, թե ի վերջո, «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն Հավելված 2.1-ով հստակ ինչ տեղեկատվություն պետք է ներկայացներ:

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը նման անհիմն մերժման արդյունքում պետությունը ստիպված է լինելու կնքել պայմանագիր հաջորդ մասնակցի՝ «Զնակ Ստանդարտ» ՍՊԸ-ի հետ, ում գնային առաջարկը մոտ 17 մլն ՀՀ դրամով ավելի բարձր է, ինչը հանդիսանում է պետական բյուջեի միջոցների անհիմն վատնում:

«ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթին՝ ներկայացնելով նույնատիպ Հավելված 2.1, գնահատող հանձնաժողովի կողմից 05.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ գնահատվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ արդեն 27.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը անհասկանալի պատճառներով որոշել է, որ նույն Հավելված 2.1 հիմա էլ չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Վերը նշված փաստերից հետևում է, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն մշտապես ներկայացրել է Հավելված 2.1-ը՝ այն տեսքով, որը ներկայացվել է նաև «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթին և բոլոր դեպքերում այն գնահատվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընկերությունը գտնում է, որ վերոհիշյալի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Գնումների մասին» ՀՀ

օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1 ենթակետի «թ» պարբերության պահանջները:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը…:

Ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Գնահատող հանձնաժողովը գտել է, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացրած «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-2018-ՃՈ/ՀԱՄ-5» ծածկագրով պայմանագիրը չի համապատասխանում «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի պահանջներին, քանի որ մասնակիցը գրասենյակային և համակարգչային մեքենաների, սարքավորումների և նյութերի նմանատիպ պայմանագրի փոխարեն ներկայացրել է աշխատանքների կատարման պայմանագիր:

Մինչդեռ վերը նշված պայմանագրի շրջանակներում կատարվել են՝ պետ-համարանիշների տպագրման աշխատանքներ, որոնց շրջանակներում՝ ամբողջ տպագրման աշխատանքները իրականացվել են գրասենյակային և համակարգչային մեքենաներով՝ օգտագործելով այնպիսի բազմազան նյութերի տեսականի, որոնց միջոցով հնարավոր է եղել կատարել համարանիշի մետաղական զանգվածը ծածկող նյութի վրա տպագրել «հոլոգրամ նշան» և «ՀՀ պետական դրոշը», որը գրեթե նույն աշխատանքն է, ինչ իր հերթին պահանջվում է կատարել տվյալ մրցույթի շրջանակներում առաջացած ժապավեններով, ավելին «QR code /շտրիխ/», «Armenia» մակնանշումը կատարվում է գրասենյակային համակարգչի և լազերային փորագրիչի միջոցով և նմանատիպ այլ աշխատանքներ:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն պետ-համարանիշների տպագրման համար օգտագործվել է տարբեր տեսակի և գույների ժապավաններ, որոնց միջոցով հնարավոր է եղել իրականացնել բարձր ջերմաստիճանի միջոցով ժապավենի նստեցման, ներկման և տպագրման աշխատանքներ:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-2018-ՃՈ/ՀԱՄ-5» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կատարված բոլոր տպագրման աշխատանքներն իրականացվել են բացառապես «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի պահանջներով նախատեսված՝ նմանատիպ համարվող աշխատանքներ /պայմանագրեր/:

Այս պարագայում Ընկերությունը գտնում է, որ «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-2018-ՃՈ/ՀԱՄ-5» ծածկագրով պայմանագիրը՝ «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի պահանջներին չհամապատասխանող ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.07.2019թ. թիվ 01.3/11/16333-19 գրությամբ ներկայացրել է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ էլեկտրոնային եղանակով ուղարկված գրությամբ հայտնել է հետևյալը.

1. Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումն առհասարակ չպետք է ընդունվեր, քանի որ ՍՑ-ՆԳ-2019/116 ծածկագրով ընթացակարգի 15.07.2019թ. տեղի ունեցած նիստի ժամանակ վերջինիս տրվել էր 4 աշխատանքային օր ժամկետ դիրքորոշում ներկայացնելու համար, սակայն դիրքորոշումը ներկայացվել է 9-րդ աշխատանքային օրը՝ 26.07.2019թ.: Ինչից հետևում է, որ Ընկերության կողմից դիրքորոշում չներկայացնելու պարագայում նիստի օր առհասարակ կարող էր չնշանակվել:

2. Ինչ վերաբերում է Ընկերության կողմից անդադար շահարկվող այն փաստին, որ ՀՀ ոստիկանության կողմից միտումնավոր հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարություն, Պատվիրատուն ևս մեկ անգամ հստակեցրել է, որ նախ և առաջ հարցում կատարվել է մեկ այլ ընկերության հետ կապված, բացի այդ պատվիրատուները ցանկացած պահի կարող են լիազոր մարմին դիմել ցանկացած հարցի շուրջ պարզաբանում ստանալու համար:

3. Ինչ վերաբերում է 05.06.2019թ. արձանագրության 2-ի 8-րդ կետով պահանջված որակավորման փաստաթղթերին, ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ Ընկերության կողմից ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել և հաշվի առնվի Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, ապա գնահատող հանձնաժողովը պետք է ի սկզբանե մերժեր Ընկերության հայտը և վերջինիս տվյալներն ուղարկեր ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բարեխղճություն և գթասրտություն ցուցաբերելով 27.06.2019թ. տեղի ունեցած նիստում Ընկերությանը տրամադրել է ևս մեկ հնարավորություն, որպեսզի վերջինս ներկայացնի որակավորման փաստաթղթեր, մասնավորապես նախկինում կատարված պայմանագրեր: Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության հայտի մերժման հիմնական հիմքը հանդիսանում է այն հանգամանքը, որ նրա կողմից ընթացակարգի շրջանակներում ներկայացված որակավորումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, այլ ոչ թե իրական շահառուների հետ կապված տեղեկատվությունը, որի մասին 10 էջ գրվել է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից բավական ուշ ներկայացված դիրքորոշման մեջ:

4. Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմանը գործի իրավական հիմքերի և հիմնավորումների մասով՝ Պատվիրատուն հայտնել է, որ այն բոլոր էջերը որոնցում տեղ է գտել հրավերի հավելված 2.1 հետ կապված փաստարկները, ամսաթվերը, արձանագրությունները և այլն, առհասարակ կապ չունեն Ընթացակարգի հետ, այլ դրանք վերաբերում են «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքով հայտնած դիրքորոշմանը: Սույն երկու ընթացակարգերը, ինչպես նաև դրանց շրջանակներում ձեռքբերվող ապրանքները և աշխատանքներն առհասարակ միմյանց հետ կապ չունեն և դրանք միմյանց հետ միավորելը տեղին չէ: Նախ 21.06.2019թ. ՀՀ ոստիկանության կողմից Ընկերությանը չի ուղարկվել ծանուցում, այլ ուղարկվել է միայն արձանագրությունը, որը հրապարակված է www.gnumner.am կայքում, որտեղ նշված է եղել անհրաժեշտ շտկումների մասին և որտեղ հիմնական շեշտը դրված է եղել որակավորման շտկմանը, քանի որ Ընկերության կողմից ուղարկված պայմանագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Մինչ այժմ ներկայացվածի հիման վրա Ընկերությանն արդեն 3-րդ անգամ էր տրվում հնարավորություն փաստաթուղթ ներկայացնելու համար:

5. «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթի 1-ին չափաբաժնով Ընկերությունն եղել է միակ մասնակիցը, իսկ 2-րդ չափաբաժնով՝ 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից, ինչից արդեն պարզ է դառնում, որ ՀՀ պետական բյուջեի միջոցների խնայողության մասին խոսք անգամ չի կարող լինել:

6. ՀՀ ոստիկանության կողմից անընդունելի է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը մասնագիտական փորձառություն որակավորման վերաբերյալ: Եթե հաշվի առնվի Ընկերության դիրքորոշումը, ապա ցանկացած ավտոմեքենա վաճառող կազմակերպություն կարող է մասնակցել վառելիքի ձեռքբերման ընթացակարգերին, քանի որ մեքենան վաճառվում է վառելիքի հետ միասին, կամ օրինակ սառնարան վաճառող կազմակերպություն կարող է մասնակցել օդորակիչների լիցքավորման ծառայությունների ձեռքբերման ընթացակարգերին, քանի որ սառնարան վաճառելիս, սառնարանը վաճառվում է ֆրիոնի հետ միասին, ինչը հստակ հակասում է գնումների մասին օրենքին և օրենսդրական ակտերին: Հրավերի մեջ հստակ նշված է եղել թե մասնակիցներն ինչպիսի որակավորման պետք է համապատասխանեն և տեսանելի է

եղել բոլորի համար: Բացի դա Ընկերության կողմից առանց կոնսորցիումի պայմանագրի ներկայացվել են 2014թ. պայմանագիր, որը կնքվել է ՀՀ ոստիկանության և «Ատլաս ինթերնեյշնլ» ԱԳ-ի միջև, որը ևս չի ընդունվել:

Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր փաստերը և փաստարկները՝ ՀՀ ոստիկանությունը պահանջում է Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.06.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն չի ներկայացրել Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի «ա» ենթակետով պահանջվող պայմանագիր (մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր), ինչպես նաև 20.06.2019թ. Ընկերության կողմից policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկվել է հավելված 6 և 6.1 հեռախոսի էկրանի հանույթի տարբերակով, որը չի կարող համարվել օրինական, քանի որ ուղարկված նկարի միջոցով հնարավոր չէ ստուգել ստորագրության իսկությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հավելված 2.1-ը ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.07.2019թ. թիվ 26/26-1/11337-2019 գրությունը, ՀՀ ոստիկանության 03.07.2019թ. թիվ 01.3/11/16333-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը

էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

Ընկերության գնային առաջարկը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով կազմել է 68 820 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 32 257 500 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին 21.06.2019թ. ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ (հիմք 21.06.2019թ. թիվ 11/655 ծանուցում):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 27.06.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն չի ներկայացրել Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի «ա» ենթակետով պահանջվող պայմանագիր (մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր), ինչպես նաև 20.06.2019թ. Ընկերության կողմից policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկվել է հավելված 6 և 6.1 հեռախոսի էկրանի հանույթի տարբերակով, որը չի կարող համարվել օրինական, քանի որ ուղարկված նկարի միջոցով հնարավոր չէ ստուգել ստորագրության իսկությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հայտի հավելված 2.1-ը ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշ-տության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող: Մասնավորապես՝ 27.06.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար Ընկերությանը տրվել է մեկ աշխատանքային օր: Ընկերության կողմից 28.06.2019թ. ուղարկվել է 2 հատ հավելված 2.1՝

իրական շահառուների տվյալների մասին, սակայն Ընկերության տրամադրած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը (բացակայում են իրական շահառուները): Բացի այդ Ընկերության ներկայացրած «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-2018-ՃՈ/ՀԱՄ-5» ծածկագրով պայմանագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի պահանջներին, քանի որ մասնակիցը գրասենյակային և համակարգչային մեքենաների, սարքավորումների և նյութերի նմանատիպ պայմանագրի փոխարեն ներկայացրել է աշխատանքների կատարման պայմանագիր:

Ընկերության ներկայացրած «ՀՀ ԿԱ Ո ԳՀԱՊՁԲ-2017-ԱՎՎ/ՃՈ/ՊՊԳՎ/ՀՈ-37/7» /11 850 000/ և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԳՐԵՆԱԿԱՆ/2019/4/» /1 860 000/ ծածկագրերով պայմանագրերի գումարները չեն բավարարում Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պահանջներին:

Ընկերության ներկայացրած «ՀՀ ԿԱ Ո-ՄԵԱՊՁԲ-ՊԼՔ-2014-19/ՃՈ» պայմանագիրը կնքված է 2014թ. ՀՀ ոստիկանության և «Ատլաս Ինտերնեյշնլ» ԱԳ-ի միջև: «ՀՀ ԿԱ Ո-ՄԵԱՊՁԲ-ՊԼՔ-2014-19/ՃՈ» պայմանագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պահանջներին, քանի որ Ընկերության կողմից ուղարկվել է այլ կազմակերպության պայմանագիր, առանց կոնսորցիումի:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ

ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը

գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որից հետո սակայն 27.06.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտի թիվ 2.1 հավելվածում արձանագրվել են անհամապասխանություններ, մինչդեռ նշված հավելվածի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանությունը գնահատվում է հայտերի բացման նիստում՝ մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատելիս, որից հետո միայն հրավերի պահանջներին համապատասխան լինելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար և վերջինս կարող է ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Ընդ որում՝ անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառվում է Կարգի 41-րդ կետով սահմանված ընթացակարգը:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտի թիվ 2.1 հավելվածում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ Ընկերությանն արդեն իսկ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելուց՝ հետևաբար և Ընկերության կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելուց հետո, ինչը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Դրա հետ մեկտեղ՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իր դիրքորոշումը Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի և Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության կիրառելիության վերաբերյալ հայտնել է իր 01.08.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/48 որոշման մեջ:

Անդրադառնալով Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որպես Ընթացակարգի իմաստով ոչ նմանատիպ գնահատված «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության միջև 15.02.2018թ. կնքված «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-2018-ՃՈ/ՀԱՄ-5» ծածկագրով պայմանագրին, հայտնում եմ հետևյալը.

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի

3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում 1-2 չափաբաժինների համար՝ **գրասենյակային և համակարգչային մեքենաներ, սարքավորումներ և նյութերը՝ բացառությամբ կահույքի և ծրագրային ապահովման մատակարարված լինելը:**

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով հրատապ բաց մրցույթը կազմակերպվել է ՀՀ ոստիկանության կարիքների համար տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար պլաստիկ քարտերի և օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով: Ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկան (Վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար կինեգրամով պաշտպանիչ թաղանթ) համաձայն հրավերի ընդգրված է գնումների միասնական անվանացանկի «22981110» միջանցիկ ծածկագրի տակ, իսկ 2-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկան (Վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար թափանցիկ պաշտպանիչ թաղանթ) ներառված է գնումների միասնական անվանացանկի «22981310» միջանցիկ ծածկագրի տակ:

Ընթացակարգի հրավերով որպես նմանատիպ սահմանված «գրասենյակային և համակարգչային մեքենաներ, սարքավորումներ և նյութերը՝ բացառությամբ կահույքի և

ծրագրային ապահովման» ներառված է գնումների միասնական անվանացանկի «30000000» բաժնում:

Ընկերության կողմից որպես նմանատիպ ներկայացված 15.02.2018թ. թիվ «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-2018-ՃՈ/ՀԱՄ-5» ծածկագրով պայմանագրի (գինը կազմում է 526 306 ՀՀ դրամ) առարկան հանդիսանում է պետհամարանիշների պատրաստման աշխատանքները, ընդ որում՝ թե գնումների միասնական անվանացանկի և թե ՀՀ ոստիկանության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-2018-ՃՈ/ՀԱՄ-5» ծածկագրով ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնման առարկան ներառված է «34321290» միջանցիկ ծածկագրի տակ:

Այսպիսով՝ Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Նույն կետի համաձայն՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկան ներառված է գնումների միասնական անվանացանկի մի խմբում («22900000»), իսկ նմանատիպ (համանման) սահմանվել է մեկ այլ բաժնում («30000000») ներառված տնտեսական գործունեության տեսակ:

ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ երկրորդ մակարդակը՝ խումբը, ցույց է տալիս բաժնում ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանախումբը (XXX00000):

Տվյալ դեպքում Ընկերության կողմից որպես նմանատիպ ներկայացված պայմանագրի առարկան ներառված է գնումների միասնական անվանացանկի «34321290» միջանցիկ ծածկագրի տակ, որն իր հերթին ներառված է «34300000» խմբում, ինչն էլ իր հերթին ներառված է հրավերով որպես նմանատիպ սահմանված «Գրասենյակային և համակարգչային մեքենաներ, սարքավորումներ և նյութեր՝ բացառությամբ կահույքի և ծրագրային ապահովման-30000000» բաժնում:

Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Գտնում եմ, որ տվյալ դեպքում առկա է Կարգի 65-րդ կետով սահմանված վերոհիշյալ դեպքը, քանի որ հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորություն են տալիս, մասնավորապես, չի հստակեցվել նաև նմանատիպ (համանման) համարվող տնտեսական գործունեության խումբը, այլ նախատեսվել է առաջին մակարդակը՝ բաժինը, ուստի հնարավոր չէ նաև պարզել, թե «30000000» բաժնում ներառված որ խմբին դասվող տնտեսական գործունեության պայմանագրերը պետք է ներկայացվեին մասնակցի կողմից: Ուստի նման պայմաններում, գտնում եմ, որ սույն մասով առկա տարբերությունն անհրաժեշտ է մեկնաբանել հօգուտ Ընկերության:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած վերոհիշյած պայմանագիրը դիտարկվել է Ընթացակարգի իմաստով ոչ նմանատիպ, իսկ Ընկերության կողմից ներկայացված մյուս պայմանագրերն ըստ էության գումարային արտահայտությամբ չեն բավարարել Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված գնային առաջարկի նկատմամբ համապատասխան հարաբերակցությունը, գտնում եմ, որ նման պայմաններում բավարար հիմքեր առկա չեն Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստն արձանագրելու համար, ուստի գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը պետք է չընդուներ Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը սահմանված չորս աշխատանքային օրվա խախտման հիմքով, ապա հայտնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 19-րդ կետի համաձայն՝ Անձը պարտավոր է որոշման մեջ հիմնավորված և

պատճառաբանված ձևով անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրը ներառյալ ներկայացրած փաստաթղթերում, գրավոր դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում բերված բոլոր փաստարկներին, տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ՀՀ պաշտպանության նախարարության 08.07.2019թ. թիվ 26/26-1/11337-2019 գրությամբ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**